

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

31.08. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը- -մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Վ.Ղարսայանը, Կ.Աշրաֆյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Մ.Սարգսյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
Ռ.Մարգարյանը -փորձագետ
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին, մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Գասպարյանին՝

Երկշաբաթյա ժամկետում ամփոփել և ԶԼՄ-ների միջոցով, մարզի կտրվածքով ներկայացնել բերքավաքի վերաբերյալ տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

ա/ Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն Օձուն համայնքի «Հոռոմայր» վանքի զբոսաշրջային ծրագրի վերաբերյալ:

բ/ Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել, ամփոփել և ներկայացնել տեղեկատվություն մարզի հյուրատնային տնտեսությունների վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝

Շրջաբերական գրություն ուղարկել մարզային ենթակայության բժշկական կազմակերպություններին՝ ուսումնական հաստատություններում դասընթացների ընթացքում բուժքույրերով պարտադիր ապահովման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ՝ կապված մարզում մշակութային միջոցառումների կազմակերպման ու անցկացման հետ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և անհրաժեշտության դեպքում նախապատրաստել գրություն՝ ուղղված Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Ախթալա համայնքի Արամյանցի տան վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ա.Աղլոյանին՝

Ճշգրտել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ մարզպետարանի աշխատակիցների վերապատրաստումների ժամկետների և անցկացման կարգի վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՅԱՆ

